ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԲԱՔՎՈՒՄ

Սույն թվականի հոկտեմբերի 1—3 օրերին Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում տեղի ունեցավ համաշխարհային մահմեդական ժողով՝ «Մահմեդականությունը՝ հօգուտ խաղաղության» նշանաբանով, որին մասնակցեցին աշխարհի տարբեր երկրներից ժամանած շուրջ 1000 ներկայացուցիչներ:

Համաժողովին ներկա էր նաև ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ տիար Կոնստանտին Խարչևը:

Համաժողովի մասնակիցները միահամուռ կերպով ողջունելի գտան ՍՍՀՄ խաղաղասիրական միջոցառումները և դեմ արտահայտվեցին տիեզերքը սպառազինելու ամերիկյան ծրագրերին:

Համաժողովին որպես դիտորդ իր մասնակցությունը բերեց նաև Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը: